

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ | 3 |
| «ԽՈՍՔ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ» ԺԱՄԵՐԸ «ՄԱՅՐԵՆԻԻ» ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ | 4 |
| ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ | 11 |
| ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ | 12 |

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խոսքային և հաղորդակցական գործունեությունը բարդ երևույթ է. այն ունի լեզվաբանական, հոգեբանական, ֆիզիոլոգիական, փիլիսոփայական, սոցիոլոգիական և այլ տեսանկյուններ և դիտարկվում է համապատասխան գիտակարգերի կողմից:

Բանավոր խոսքը պատմականորեն նախորդում է գրավորին, ունի խոսակցական–արտասանական իրացում: Այն հիմնականում բարձրաձայն խոսողություն է. կարելի է ձայնագրել ու վերարտադրել, հաղորդել տեխնիկական միջոցներով (հեռախոս, ռադիո): Որոշակի է սրա պայմանավորվածությունը խոսքային իրադրությամբ, մասնավորապես՝ հաղորդակցվողների փոխհարաբերությամբ, հաղորդողի հոգեվիճակով, տրամադրությամբ: Այս դեպքում առանձնակի նշանակություն են ստանում ուղեկցող միջոցները (շարժումների գործադրումը): Արտահայտության ձևերն են՝ գրույցը, բանավեճը, վեճը, զեկուցումը, դասախոսությունը, ճառը, հայտարարությունը, կոչը, երգը (մեներգը, խմբերգը), չափածո և արձակ խոսքը: Բանավոր խոսքը սահմանափակված է տարածականորեն (բանավոր կարելի է հաղորդակցվել միայն լսելի տարածության վրա չհաշված՝ տեխնիկական միջոցների գործադրումը) և ժամանակով (բանավոր կարող են հաղորդակցվել միայն տվյալ սերնդի մարդիկ, ժամանակակիցները):

«Մայրենիի» դասընթացում հատուկ առաջադրանքներ ու ժամանակահատված է առանձնացված նաև խոսքի և հաղորդակցական ունակությունների զարգացմանը: Մեր *ուսումնասիրության թեման* խոսքի և հաղորդակցությանը նախատեսված ժամերն են «Մայրենիի» դասընթացում: Նշված թեմայի քննությունը *արդիական նշանակություն* ունի, քանի որ ժամանակն իր կառուցողական պահանջներն է առաջադրում խոսքի ու հաղորդակցման զարգացման համար նոր մեթոդներ առանձնացնելու: Մեր *նպատակն է* հետազոտել խոսքին և հաղորդակցմանն առնչվող նյութերը /տեսքտեր, առաջադրանքներ/: Այսդ նպատակով մեր հետազոտական աշխատանքում առաջադրել ենք հետևյալ *խնդիրը*՝ ուսումնասիրել այն մեթոդները, վարժությունները, որոնք կարևոր դեր են կատարում սովորողների խոսքի, հաղորդակցական ունակությունների զարգացման գործում:

«ԽՈՍՔ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ» ԺԱՄԵՐԸ «ՄԱՅՐԵՆԻԻ» ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

Մտածողության բարձրագույն ձևը՝ վերացական մտածողությունը իրականացվում է հասկացությունների, դատողությունների և մտահանգումների միջոցով: Վերջիններս հանդես են գալիս լեզվական թաղանթի հիմքի վրա: Խոսքի միջոցով հանդես եկող ընդհանրացված մտածողությունը հնարավորություն է տալիս բերնաթափել առարկայականի, եզակիի, առանձինի հսկայական ծանրությունը և միասեռ առարկաները անվանել մեկ ընդհանուր բառով: Դա միևնույն ժամանակ թույլ է տալիս մշտական կապ հաստատել եզակիի և ընդհանուրի միջև: Լեզուն թույլ է տալիս առանձին փաստերից, եզրակացություններից բխեցնել օրենքներ, սահմանումներ և դրանք կիրառել գործնականում¹: Մտածողությունը լեզվի միջոցով ոչ միայն տարրալուծում է երևույթը, մասնատում այն, բաղդատում և ենթարկում հետազոտության, այլև կատարում է հատկությունների, առանձին բաղադրիչների, միմյանց առնչվող մասերի ու փաստերի համակցում, ամբողջացում և ընդհանրացում:

Խոսքի միջոցով կրտսեր դպրոցական տարիքի սովորողը զգայական ճանաչողության սահմանափակ հնարավորությունից անցում է կատարում տրամաբանական մտածողությանը: Ինչպես նկատում է Ի. Սեչենովը, որքան վերացական խոսքը հեռանում է իր զգայական հիմքից, այնքան վերածվում է ոչ զգայական ազդարարի: Ասենք, ծաղկի վերաբերյալ մեզ տեղեկություններ են տալիս տեսողական, հոտառական, շոշափելիքի զգայարանները, մինչդեռ «ծաղիկ» ընդհանուր հասկացությունը վեր է այդ ամենից: Այն ընդհանրացնում է մի շարք էական հատկություններ և հենց դրանով էլ ճանաչողական ավելի մեծ դեր է կատարում: Վերացարկման շնորհիվ աշակերտները ճանաչում են նաև իրերի ու առարկաների թաքնված հատկությունները, հարաբերությունները, բացահայտում պատճառահետևանքային կապերը և այլն:

Ուսուցումն սկսելով տառերից, հնչյուններից ու տառերից՝ երեխաներն աստիճանաբար անցնում են գրավոր խոսքի ու ընթերցանության տեխնիկայի տիրապետմանը:

¹ Հոգեբանություն, խմբ.՝ Ա. Կովալյով և ուրիշներ, Եր., 1970, էջ 298:

Կրտսեր դպրոցականի խոսքը դեռևս հիմնականում հենվում է առարկայական ըմբռնումների վրա և հանդես է գալիս կոնկրետ իրի և առարկայի մտապատկերի հետ. «Երեխայի վարքագիծը որոշվում է նրա գիտակցությամբ, որի հիմքում ընկած է առաջին և երկրորդ ազդանշանային համակարգերի միասնությունը՝ երկրորդ ազդանշանային համակարգի առաջատար դերով»² :

Ջգայական իմացությունը կրտսեր դպրոցականի տարիներին միշտ էլ գործուն դեր է կատարում: Սակայն նկատվում է նաև, որ 7-8 տարեկանից սկսած՝ երեխաների երկրորդ ազդարարային համակարգը, այսինքն՝ խոսքն առաջին ազդարարային համակարգի նկատմամբ սկսում է կարգավորիչ դեր կատարել, և գնալով խոսքի դերը մեծանում է: Միաժամանակ, Ջգայական իմացության և տրամաբանական մտածողության միջև մշակվում է ավելի սերտ կապ, համագործակցություն: Խոսքի շնորհիվ իրերն ու առարկաները համեմատաբար շուտ են ճանաչվում, և, իր հերթին, դիտողական ուսուցումը ակտիվացնում է վերացական խոսքի ըմբռնումը: Դպրոցում լեզուն, մի կողմից, ուսուցանվում է որպես հատուկ առարկա՝ նպատակ ունենալով զարգացնել աշակերտների գրավոր ու բանավոր խոսքը, մյուս կողմից, նպաստում է այլ առարկաների ուսուցմանը: Գործնական նշանակությունից լեզուն աստիճանաբար անցնում է ավելի բարդ գործառնության և, առհասարակ, հանդես է գալիս որպես տրամաբանության զարգացման միջոց: «Մայրենի լեզու սովորեցնելը երեք նպատակ է հետապնդում, առաջին՝ զարգացնել երեխաների այն բնածին, հոգեկան ունակությունը, որն անվանում ենք խոսելու ձիրք, երկրորդ՝ երեխաներին հասցնել մայրենի լեզվի գանձերի գիտակցական յուրացմանը և երրորդ՝ երեխաներին յուրացնել տալ այդ լեզվի տրամաբանությունը»³:

Խոսքը սովորաբար ունի առանձին բաղադրիչները՝ տառ, բառ, նախադասություն: Երեխան սկզբնապես դրանք պետք է սովորի: Իր բառապաշարի հարստացմանը զուգընթաց, նա պետք է սովորի բառերի գործածությունը, հասկանա դրանց իմաստը, նշանակությունը և հմտորեն օգտվի դրանցից:

«Մայրենի» դասընթացում կարդալու կարողությունների ձևավորումից հետո ուսուցիչը ուշադրություն պիտի դարձնի խոսքային կարողությունների

² Գ. Գալպերին, Կ. Գոլիշևա, Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա, մաս I, Եր., 1968, էջ 291:

³ Կ. Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, հ. 2, Ե., 1950, էջ 742:

զարգացմանը: «խոսք և հաղորդակցում» ժամերին լայնորեն պետք է կիրառվեն գրույցի տեսակները: Զրույցը բանավոր երկխոսության ձև է, որի ժամանակ՝

- ճշտվում են դպրոցականների ուսումնահաղորդակցական գործունեության դրդապատճառները,
- ստեղծվում են երեխաների հաղորդակցական կարողությունները բավարարող պայմաններ,
- ձևավորվում են գործնական և ընկերական բարեկիրթ փոխհարաբերություններ:

Կախված ուսումնասիրվող թեմայից՝ կարող են խոսքի զարգացման համար ընտրվել տարբեր գրույցներ: Օրինակ՝ ժամանակի միավորների, եղանակի ուսուցման ժամանակ կարող է կիրառվել տեղեկատվական գրույցը: «Գարուն» թեմայի շրջանակներում ուսուցիչը աշակերտներին տեղեկություն է տալիս տարվա տվյալ եղանակի մասին: Ձևավորվում է հաղորդակցության թեմա աշակերտների և ուսուցչի միջև: Կրտսեր դպրոցականը ոչ միայն պետք է կարողանա ըմբռնել գրույցի միջոցով ստացած գիտելիքները, այլև իմաստավորված ձևով կիրառել դրանք խոսքի մեջ: Հաղորդակցումը երեխային հնարավորություն է ընձեռում հարստացնել ճանաչողական գործունեության հիմնական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները:

Գրականությունն այսօր և՛ որպես հասարակության հոգեբարոյական կյանքի գոյության փաստ, և՛ որպես դպրոցական առարկա այն բարոյական հիմքն ու մաքուր ակունքն է, որը սնում է մարդկանց հոգևոր աշխարհը: Բարոյական համոզմունքները բուռն կերպով են ձևավորվում մանկական տարիքում: Սա նշանակում է, որ հատկապես դպրոցում պետք է արթնացնել, իսկ հետո նաև ձևավորել առարկայի նկատմամբ երեխաների հետաքրքրությունն ու սերը, զարգացնել գեղեցիկի, գրական խոսքի խորության ընկալման կարողությունը և դրա բարոյական ներգործության ուժը:

Հաղորդակցության ժամերին սովորողների բարոյական դաստիարակության խնդիրների լուծման գլխավոր պայմանը սովորողների՝ գրական ստեղծագործությունը խորությամբ հասկանալու, վերլուծելու կարողությունն է: Մայրենի լեզվի դասերին աշակերտները ուսուցչի ղեկավարությամբ կարդում են

գրական ստեղծագործություններ: Ստեղծագործական գեղագիտական և բարոյական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որ.

- խորհեն ընթերցածի շուրջ,
- ապրոմակցեն հերոսներին,
- գնահատեն նրանց արարքները,
- իմաստավորեն նրանց խնդիրները,
- համեմատեն իրենց կյանքը գրական կերպարների կյանքի հետ,
- ձգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքներ:

Ընթերցելով և վերլուծելով ստեղծագործությունները՝ երեխան պետք է խորհրդածի ճշմարիտի և սխալի, բարու և չարի, սիրո և ատելության, մարդու հնարավորությունների և աշխարհում նրա տեղի մասին: Կյանքում նշված խնդիրների լուծմանը էապես կնպաստի գրական ստեղծագործությունների ինքնուրույն ընթերցանությունը, իսկ ուսուցիչը ուղղորդողի դեր կկատարի այդ գործընթացում:

Բանավոր խոսքի զարգացումը բավականին բարդ գործընթաց է: Կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման համար անհրաժեշտ երեք բաղադրիչների՝ բառապաշարի հարստացման ու կատարելագործման, խոսքի արտահայտչականության՝ առոգանության և տրոհության պահպանման և լավ պատմելու կարողության մշակման աշխատանքները պետք է իրականացնել միաժամանակ, միմյանց հետ սերտորեն կապված⁴: Իսկ դրա լավագույն միջոցը կապակցված խոսքն է՝ երեխաներին խոսեցնելը, տեսածի, լսածի ու զգացածի մասին պատմելը: Խոսելու, արտահայտվելու կամ պատմելու ընթացքում որոշակիորեն դրսևորվում է երեխայի բառապաշարը, խոսքի արտահայտչականությունն ու պատմելու կարողությունը, և այն, ինչ թերի է, ուսուցիչն ուղղում, շտկում ու կատարելագործում է կոնկրետ լեզվական նյութի վրա: Ասել է թե՛ ընթերցված նյութի վերարտադրության առաջին փուլը անմիջականորեն առնչվում է կարդալու ուսուցման տեխնիկային: Կարդալու կարողության շնորհիվ է զարգանում պատմելու մեթոդիկական, քանի որ ընթերցանության դասերին ամենակարևորը կարդացածը հասկանալն է:

⁴ Ս. Խաչատրյան, Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում, «Նախաշավիղ» հանդես, Երևան, 1.2013, էջ 4-5:

Խոսքի ուսուցման, հաղորդակցման մյուս դժվարությունը կախված է հնչերանգի զգացողության բարդացման, տրամաբանական շեշտերի ու դադարների պահպանման հետ: Եթե նախադասությունը կարդալիս երեխան գրեթե յուրաքանչյուր բառից հետո դադար է տալիս, ապա այստեղ դադարները պետք է լինեն յուրաքանչյուր նախադասության վերջում, ծայնի բարձրացումն ու ցածրացումը կապված պետք է լինեն նախադասության տրամաբանական շեշտի և վերջակետի ճիշտ զգացողության հետ: Այս նպատակով յուրաքանչյուր բնագիր կարդալուց առաջ երեխաներին պետք է դիտել տալ բնագրին վերաբերող նկարը, իսկ ապա զրույց անցկացնել դրա շուրջ, որպեսզի հնարավոր լինի նրանց թեմայի ոլորտը մտցնել: Դրան մեծապես կարող է օգնել նաև բնագրի դիտումը կամ լուռ ընթերցումը, որը լուռ կարդալու ուսուցման ձևերից մեկն է: Գործադրելի են նաև բառերի շուրջ տարվող բառային աշխատանքը, բովանդակության վերարտադրումը, կրկնաընթերցումը և այլն, որոնք հնարավորություն են տալիս աշակերտներին վարժեցնել բնագրի ընթերցման մեջ, սովորեցնել գեղեցիկ ու կանոնավոր կարդալ, տիրապետել կարդալու կարողությանը:

Բանավոր խոսքի զարգացման դասերին կարդալու կարողության հմտություններ ձևավորելուց հետո անցում է կատարվում պատմելուն նախապատրաստող հարցերին: Հարցերը պետք է կառուցել այնպես, որ դրանք ոչ միայն նպաստեն ստեղծագործության կամ նյութի մանրամասն վերարտադրմանը, այլև գլխավոր միտքը որոշելուն, գործող անձերի վարքը վերլուծելուն, դեպքերի պատճառահետևանքային կապերը ճշգրտելուն:

Խոսքի զարգացման խնդիրներն ու նպատակները կրտսեր դասարաններում դասարաններում հետևյալներն են.

- ձևավորել և դասարանից դասարան զարգացնել երեխաների կարդալու կարողությունները,
- մաքրել, հղկել երեխաների՝ նախադպրոցական տարիքում ձեռք բերած բառապաշարը,
- ձևավորել հաղորդակցական կարողություններ, բարեկիրթ խոսքի մշակույթ,
- ձևավորել փոքրածավալ տարաբնույթ ստեղծագործություններ ընթերցելու, դրանց հիմնական գաղափարըն ընկալելու, հերոսների

գործողությունների տրամաբանականությունն ընկալելու, պարզ դատողություններ անելու կարողություններ,

- գեղարվեստական նյութերի ընթերցման, լեզվական տարրական գիտելիքների ու կարողությունների ձեռքբերման ճանապարհով ձևավորել հայեցի մտածողություն, ազգային հոգեկերտվածք, զարգացնել լեզվամտածողությունը, վերլուծական և քննադատական մտածողությունը:

Աշակերտը պետք է հանդես գա որպես ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից, ինքնուրույն այդ ուղին անցնելու պատրաստ անձնավորություն: Սովորաբար խոսքի զարգացման մեթոդի բաղադրատարրեր են դառնում՝

- գրույցը,
- բնագրի ընթերցումը,
- բառային աշխատանքը,
- պատմումը,
- ամփոփումը:

Սովորողների խոսքային կարողությունների գնահատումը պայմանավորված է ձեռք բերած որակական հատկանիշներով, որոնցով պայմանավորված է լավ ընթերցանությունը: Այդ որակներն են՝

- ճիշտ կամ անսխալ խոսել,
- հասկանալով կամ գիտակցորեն խոսել,
- վարժ խոսել,
- արտահայտիչ խոսել,
- արագ խոսել:

Կրտսեր դպրոցականները առավել հեշտությամբ են ընկալում պարզ կառուցվածքով, սյուժետային քիչ դեպքերով ստեղծագործությունները: Հատկապես մատչելի են այն ստեղծագործությունները, որոնցում դեպքերը հեղինակի մտահաղացումները շարադրված են հաջորդական զարգացմամբ:

Այսպիսով՝ հաղորդակցական ունակությունների և խոսքի զարգացումը սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեության կազմակերպման ձևերից է, որը նպաստում է.

- ինքնուրույն և ստեղծագործական գործնական կարողությունների զարգացմանը,
- վերլուծական հմտությունների դրսևորմանը,
- ստեղծագործական դաստիարակչական կողմի ընկալմանը,
- կրթության զարգացմանը և այլն⁵:

⁵ **Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան**, Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում // «Նախաշավիղ», Երևան, 2010, N6, էջ 35-36:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անձի զարգացման, նրա արժեքային համակարգի, մտածողության ձևավորման գործում մեծ դեր են կատարում խոսքն ու հաղորդակցումը: «Մայրենիի» դասընթացում հաղորդակցական ունակությունների զարգացմանը նպաստում են գեղարվեստական ստեղծագործությունների հերոսների արարքների, դատողությունների վերլուծությունը, պատմումը դպրոցականների մեջ որոշակի արժեքների ստեղծման կարևոր ազդակ է դառնում: Ընթերցած ստեղծագործության մեջ կերտված կերպարների գործունեությունը, նրանց զգացումնաբան ասարմները սերտորեն առնչվում են ինչպես աշակերտի ինքնարտահայտման, այնպես էլ ուսումնական-ստեղծագործական գործունեության հիմքերին:

Խոսքի զարգացման մեթոդիկայի ճիշտ ընտրությունը նպաստում է կհաղորդակցական ունակությունների զարգացմանը: Կապակցված խոսքի ստեղծումը խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների բարձրակետն է, որովհետև այդ ուղղությամբ տարվող աշխատանքների վերջնական նպատակը աշակերտների մեջ կապակցված խոսք ստեղծելու կարողության ձևավորումն է: Խոսք կառուցելու կարողության մշակման տեսակետից օգտակար են ինքնուրույն ընթերցանությունն ու դրան հաջորդող փուլը՝ պատմումը, որը հնարավոր է իրականացնել նույնիսկ դասագրքում եղած թեմատիկ նկարների շուրջ կապակցված պատմությունների ստեղծման, տեսածի ու լսածի, զգացածի ու խորհածի վերարտադրման միջոցով: Այս բոլոր դեպքերում երեխաներն ստիպված են լինում կապակցված ձևով ու որոշակի համակարգով ընթերցել ու խոսք կառուցել: Ուսումնասիրվող յուրաքանչյուր նյութ աշակերտների կողմից պետք է ամբողջությամբ վերարտադրվի, որպեսզի նրանք սովորեն նյութի հաջորդականությունը պահպանել, հետևել դեպքերի ու դեմքերի տրամաբանական զարգացմանը, կարողանան կապակցված ու ավարտուն խոսք ասել:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Գյուլամհրյան Զ.**, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006:
2. **Գյուլամհրյան Զ.**, Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998:
3. **Գյուլամհրյան Զ.**, «Մայրենի լեզու» դասագրքի մեթոդական ուղեցույց, Երևան, 2004:
4. **Թորոսյան Կ., Չիրուխյան Կ.**, Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում // «Նախաշավիղ», Երևան, 2010, N6:
5. **Խաչատրյան Ս.**, Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում, «Նախաշավիղ» հանդես, Երևան, 1.2013:
6. **Կանեցյան Գ.**, Կապակցված խոսքի զարգացումը առաջին դասարանում, Երևան, 1990:
7. Մանկավարժություն, Երևան, 2007:
8. **Տեր-Գրիգորյան Ս.**, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980: